ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հաստատված է

ԳՊՀ խորհրդի 09.06.2016թ. նիստում

Խորհրդի նախագահ Ա.Խաչատրյան

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

2016-2017թթ.

ԳՈՐԻՍ- 2016թ.

Նախաբան

«Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, արժևորելով ու պահպանելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի առաջատար բարձրագույն ուսումնական հաստատության իր առաքելությունը, շուրջ հինգ տասնամյակ շարունակում է զարգացնել բարձրագույն կրթության համակարգը՝ ապահովելով միջբուհական և միջմշակութային կապերը՝ Բոլոնիայի հռչակագրի դրույթներին համապատասխան: Գորիսում բուհը ստեղծվել է ՀԽՍՀ կառավարության 1967թ. հոկտեմբերի 1-ի որոշմամբ, և հաստատությունն իր գործունեությունը սկսել է սկզբում՝ որպես Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի (այժմ՝ համալսարանի), այնուհետև՝ որպես Հայաստանի պետական պոլիտեխնիկական ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան) Գորիսի մասնաճյուղ: Տարիների ընթացքում բուհը, գործելով ՀՀ վերոնշյալ հեղինակավոր ուսումնական հաստատությունների համակարգում, անցել է բարձրագույն կրթության բարեփոխումների հիանալի դպրոց, կուտակել է բուհական համակարգի գործունեության հսկայական փորձ: Բուհի ստեղծումը, բարձրագույն կրթությամբ որակյալ մասնագետներով տարածաշրջանը ապահովելուն զուգընթաց, ի սկզբանե նպատակ է հետապնդել տարածաշրջանից երիտասարդության արտահոսքի կանխման, Արցախի հետ կապի ամրապնդման և բնակչության հասարակական-քաղաքական գիտակցության ակտիվացման:

ՀՀ կառավարության 2005թ. հոկտեմբերի 6-ի թիվ 2400-ն որոշմամբ Գորիսի մասնաճյուղի հենքի վրա ստեղծվել է «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ որպես ինքնուրույն բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համալսարանի կարգավիճակով (կանոնադրությունը հաստատվում է 22.02.2006թ. և վերահաստատվում փոփոխություններով՝ 8.11.2012թ.): Հարկ է նշել, որ տարիների ընթացքում բուհը պատվով է կատարել իր պարտականությունները: Շրջանավարտները ակտիվ գործունեություն են ծավալում ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Արցախի դպրոցներում ու տնտեսության տարբեր բնագավառներում, նրանցից շատերը ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ինչպես արցախյան ազատագրական պայքարին, այնպես և տարածաշրջանային ինքնապաշտպանական մարտերին: Պատերազմական գործողությունների մասնակիցների մի մասը իրենց կյանքը զոհաբերեցին Արցախի ազատագրման և հայրենի եզերքի պահպանման համար:

2004 թվականից անցնելով բարձրագույն կրթության երկաստիճան համակարգի՝ բուհը նորամուծություններ է իրականացրել ուսուցման կազմակերպման կրեդիտային համակարգի ներդրման ուղղությամբ, ստեղծել է նոր մասնագիտություններ ու մասնագիտացումներ: Զարգացնելով ու արդիականացնելով կառավարման համակարգը՝ բուհում ավանդականին զուգահեռ ստեղծվում և վերակառուցվում են նոր ստորաբաժիններ, մշակվում են գիտական և ուսումնական նոր ուղղություններ: Համալսարանի կոլեկտիվը 2017թ. պատրաստվում է հանդիսավորությամբ նշելու իր գործունեության 50-ամյա հոբելյանը:

Բարեփոխման ծրագիրը ընդգրկում է հետևյալ բաժինները՝

1. Համալսարանի առաքելությունը
2. Համալսարանի նպատակներն ու խնդիրները
2.1. Գերակա և միմյանց հետ փոխկապակցված խնդիրներ
3. Բարձրագույն կրթության քաղաքականության գերակայությունները՝
3.1. Կրթության մատչելիության երաշխիքների ապահովումը մասնագիտական խոր գիտելիքներով բարձրորակ և մրցունակ մասնագետների պատրաստման և վերապատրաստման գործընթացում

3.2. Կրթության որակի և դաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման պայմանների ստեղծում
4. Մասնագիտություններ և մասնագիտացումներ, ուսանողական համակազմի ձևավորման համակարգ
5. Լրացուցիչ կրթության կազմակերպում
6. Գիտամեթոդական ու հետազոտական գործունեություն
6.1. ԳՊՀ գիտական խորհրդի գործունեությունը
6.2. ԳՊՀ ուսումնագիտական գործունեությունը
7. Միջազգային գործունեություն և որակի ապահովում
8. Ֆինանսական գործունեություն
9. Սոցիալական աջակցության միջոցառումներ
10. Համալսարանի կառուցվածքային ու կառավարման համակարգի զարգացում և նյութատեխնիկական բազայի ընդլայնում

1. Համալսարանի առաքելությունը

Գորիսի պետական համալսարանում այժմ գործում են երեք ֆակուլտետներ՝

1. Բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետ
2. Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետ
3. Տնտեսագիտության և ճարտարագիտության ֆակուլտետ

Ֆակուլտետներում իրականացվում է բարձրագույն կրթություն՝ 14 մասնագիտություններով: Ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ձևերով, տեսլականի մեջ հնարավոր է նաև ներդնել ուսուցման այլ ձևեր: Համալսարանը ՀՀ Սյունիքի մարզի ճանաչված ուսումնագիտական կենտրոններից է, որի մանկավարժական ու գիտական ներուժը ակտիվորեն մասակցում է դպրոցական, բուհական դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների ստեղծման, հիմնարար ու կիրառական գիտությունների հիմնախնդիրների մշակման գործին:

Գորիսի պետական համալսարանը կրթական ու գիտամեթոդական ոլորտներում իր առաքելությունն է համարում՝

1. Հայկական բազմադարյա մանկավարժական ու ճարտարագիտական դպրոցի լավագույն ավանդույթների պահպանումը և վերաարժևորումը,
2. Բարեփոխումների ու նորամուծությունների ներդրման ճանապարհով բարձրագույն կրթության առաջանցիկ զարգացումը,
3. Մարզի կրթության, մշակույթի, տնտեսության բնագավառների կարիքներին ու զարգացման հնարավորություններին համահունչ կրթական-հետազոտական ծրագրերի ու ծառայությունների իրականացումը,
4. Ժամանակի պահանջներին համընթաց՝ մրցունակ, համակողմանի զարգացած, ազգային մտածելակերպով օժտված օրինապահ ու պատասխանատու կադրերի պատրաստումը՝ հավատարիմ մնալով համամարդկային կրթամշակութային, հոգևոր-բարոյական արժեքներին, ժողովրդավարացման, ազատականացման, հանդուրժողականության, կրթության մատչելիության ու շարունակականության սկզբունքներին:

2.Համալսարանի նպատակներն ու խնդիրները

-Համալսարանի կրթական համակարգի նորացման ու զարգացման հիմնական նպատակներից է բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման ու վերապատրաստման կայուն մեխանիզմների ձևավորումը կրթության երեք մակարդակներում,

-Գիտելիքների, հոգևոր արժեհամակարգի ձևավորման գործընթացի արդյունավետության բարձրացում, նորամուծությունների իրագործման ունակ մասնագետների պատրաստում,

-Հայաստանի Հանրապետության, հատկապես Սյունիքի մարզի հասարակական կյանքում ընթացող բոլոր գործընթացներում Գորիսի պետական համալսարանի շրջանավարտների և աշխատակիցների դերի բարձրացում, բարձրագույն կրթության ռազմավարության արդիականացում,

-Միջմշակութային փոխազդեցության շրջանակների ընդլայնում, ՀՀ և արտասահմանյան առաջատար բուհերի հետ համագործակցության զարգացում և կրթական խնդիրների նպատակամետ լուծում,

-Բարձրագույն կրթության ասպարեզում գործող կազմակերպչական-իրավական, վարչական, տնտեսական ու ֆինանսական մեխանիզմների արդիականացում և նոր մեխանիզմների առաջարկում:

2.1. Գերակա և միմյանց հետ փոխկապակցված խնդիրներ

- Համալսարանական կրթության մատչելիության ու հնարավորությունների իրացման հավասար երաշխիքների ապահովում ամենատարբեր սոցիալական ու մասնագիտական խմբերի, ՀՀ քաղաքացիների ու արտասահմանցիների համար,

-Ժամանակակից տեղեկատվական ու հետազոտական տեխնոլոգիաների շարունակական ներգրավում մասնագիտական կրթության, գիտական, մեթոդական ուսումնասիրությունների գործընթացներում՝ ապահովելու ուսուցման բարձր արդյունավետություն և որակ,

-Տարածաշրջանային տնտեսական զարգացման ծրագրերում համալսարանի մասնագիտական ներուժի ընդգրկվածություն, աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին հարմարվողականության մեխանիզմների մշակում ու ներդնում,

-Կրթական համակարգում տեսության ու պրակտիկայի արդյունավետ համակցման, կրթական քաղաքականության սուբյեկտների, ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների՝ ըստ պատասխանատվության մակարդակի արդյունավետ համագործակցության միջավայրի ձևավորում,

-Կրթության զարգացման բյուջետային, արտաբյուջետային, գրանտային և օրենքով չարգելվող այլ ռեսուրսների ներգրավմամբ արդյունավետ նորմատիվաիրավական, կազմակերպչական, տնտեսական ու կայուն ֆինանսական մեխանիզմների ձևավորում,

-Աշխատակիցների սոցիալական կարգավիճակի ու գործիմացության մակարդակի բարձրացում, նրանց նկատմամբ պետական ու հասարակական աջակցության ուժեղացում:

3. Բարձրագույն կրթության քաղաքականության գերակայությունները

3.1. Կրթության մատչելիության երաշխիքների ապահովումը մասնագիտական խոր գիտելիքներով բարձրորակ ու մրցունակ մասնագետների պատրաստման ու վերապատրաստման գործընթացում

-Նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ ուսումնական լաբորատոր սարքավորումների, ուսումնական ծրագրերի և գրականության օգտագործում, ուսումնանյութական բազայի հարստացում,

-Աշխատողների ու սովորողների համար գրադարանների ֆոնդերից, էլեկտրոնային ռեսուրսներից, ընթերցասրահներից ու մշակութային կենտրոններից օգտվելու անվճար պայմանների ապահովում,

-Աշխատանքային այնպիսի պայմանների ստեղծում, որոնք ապահովում են ուսանողների ու դասախոսների իրավունքների, շարժունակության պաշտպանությունը կրթական գործընթացում, նրանց հոգեբանական ու ֆիզիկական անվտանգությունը,

-Աշխատանքային շուկայի իրական պահանջարկի, պետության ու հասարակության կողմից կրթության համար տրամադրվող ծախսերի չափի, ստացած կրթության որակական մակարդակի և պետական կրթական չափանիշներին դրա համապատասխանության մասին տեղեկատվության տրամադրում, ինչպես նաև մասնագիտական կրթություն ձեռք բերելու հավասար հնարավորությունների ապահովում,

-Մարզի ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշման համակարգի մշակում և ներդնում՝ ուղղված սովորողների ուսուցման անհատականացմանն ու սոցիալականացմանը՝ նկատի ունենալով աշխատաշուկայի իրական պահանջներն ու փոփոխման միտումները,

-Ընդլայնել և բազմազանեցնել համալսարանի ընդունելության մասնագիտությունների հեռանկարային ցանկը՝ ուղենիշ ունենալով Սյունիքի մարզի և ԼՂՀ կրթական համակարգի, տնտեսության կանխատեսվող պահանջարկն ու զարգացման գերակայությունները, ինչպես նաև դրանց իրականացման համար առկա գիտամանկավարժական ներուժը,

-Որպես մարզի առաջատար բուհ՝ ԳՊՀ հանձնառու է պատրաստելու խոր գիտելիքներով բարձրորակ ու մրցունակ մասնագետներ՝ ապահովելով նրանց վերարտադրության, պատրաստման և վերապատրաստման գործընթացը,

-Հատուկ կրթության ու սոցիալական մանկավարժների ու աշխատողների պատրաստման բովանդակության ընդլայնում՝ ախտորոշման ու ռիսկի խմբի երեխաների հետ աշխատանք տանելու մեթոդական բազայի ստեղծման համար,

-Գիտական, մանկավարժական փորձն ու գիտելիքները ներդնել մրցունակ կադրերի պատրաստման ու վերապատրաստման, ժամանակակից ծրագրերի մշակման ու իրականացման գործընթացում:

3.2. Կրթության որակի և դաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման պայմանների ստեղծում

-Էականորեն արդիականացնել կրթության բովանդակությունն ու համալսարանի կառուցվածքը՝ մարզի դպրոցների, մշակութային օջախների, հայկական բանակի, պետական այլ կառույցների պահանջներին համապատասխան,

-Կարիերայի կենտրոնի միջոցով ստեղծել որակավորման տարբեր մակարդակներ ունեցող կադրերի՝ աշխատուժի շուկայի ընթացիկ ու հեռանկարային մշակման մոնիթորինգի արտաքին ու ներքին արդյունավետ համակարգ, որը կնպաստի շրջանավարտների՝ մասնագիտական աշխատանքի ձեռքբերման գործընթացին,

-Մասնագիտական կրթության զարգացման ռազմավարական ուղղությունների մեջ կարևորել բուհի տեխնիկական հիմքի ու ենթակառուցվածքների ստեղծումն ու արդիականացումը,

-Հատուկ ուշադրության կենտրոնում պահել այն գիտական հետազոտություններն ու մշակումները, որոնք վճռական ազդեցություն կարող են ունենալ Սյունիքի մարզի տնտեսության կադրային ու տեխնոլոգիական մակարդակների ամրապնդման վրա,

-Իրականացնել միջոցառումներ, որոնք կնպաստակառուղղվեն մասնագիտական կրթության որակի բարձրացմանը,

-Ապահովել մանկավարժական մասնագիտական կրթության առաջանցիկ զարգացումը, մարզի հանրակրթական դպրոցները և միջին մասնագիտական հաստատությունները բարձրորակ աշխատողներով համալրելու հասարակական պահանջարկը՝ հաշվի առնելով այդ բնագավառում 22 մանկավարժական կրթության ձեռքբերումներն ու միջազգային չափանիշները,

-Արդիականացնել մասնագիտական կողմնորոշման, ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման, ուսանողների հետազոտական, ուսանողական ինքնավարության ուղղություններով տարվող աշխատանքների բովանդակությունը՝ ապահովելով շրջանավարտի մրցունակությունը տնտեսական ժամանակահատվածի համար,

-Կադրային ներուժի և ուսուցման որակի ապահովման նպատակով ստեղծել համակարգի կառավարման նոր մեխանիզմներ ու չափանիշներ՝ կրթական ծրագրերի բովանդակության, կադրային ապահովվածության, ինչպես նաև ուսուցման արդյունքների ինքնավերլուծության, ինքնագնահատման համար,

-Ստեղծել օպտիմալ հաստիքակարգ,

-Մրցութային կանոնակարգով իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի համալրում և աճ,

-Մշակել և ներդնել դասախոսների գիտամանկավարժական ու գիտամեթոդական գործունեության արդյունավետության գնահատման նոր համակարգ՝ առանձին տարակարգերի առաջընթացի և աշխատավարձի անհատականացված հեռանկարով՝ հիմք ընդունելով գործունեութ յան գնահատման արդյունքները,

-Վերակառուցել դասախոսների վերապատրաստման համակարգը՝ օգտագործելով միջհամալսարանական կապերը,

-Որակի գնահատման նպատակով կատարելագործել մասնագետների պատրաստման որակի մշտական մոնիթորինգի վարկանիշային համակարգը, պարբերաբար ներկայացնել ու քննարկել դասախոսների գիտամանկավարժական գործունեության և ուսանողների ուսումնական նվաճումների գնահատման արդյունքները.

-Կատարելագործել ուսանողների ընթացիկ ու ամփոփիչ ատեստավորման համակարգը և ուսումնական գործընթացները բոլոր կրթական ծրագրերի համար,

-Համալսարանի դաստիարակչական համակարգի զարգացման համար ապահովել ուսանողների ինքնակառավարումը, որը պետք է հենվի իրավահավասարության, ընտրողականության, բացախոսության, օրինականության, քննադատության, ինքնաքննադատության, հանդուրժողականության սկզբունքների վրա,

-Ապահովել դաստիարակության գործընթացի կառավարման փուլերի հաջորդականությունը և ձևավորել ստեղծագործական, համագործակցության վստահելի միջավայր ու մթնոլորտ:

4. Մասնագիտություններ և մասնագիտացումներ, ուսանողական համակազմի ձևավորման համակարգ

ԳՊՀ-ում կրթություն է իրականացվում բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերով՝ առկա և հեռակա համակարգերում: Ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի՝ պատկերը հետևյալն է.

	Մասնագիտություն	Բակալավր		Մագիստրոս	
		առկա	հեռակա	առկա	հեռակա
1	Ֆիզիկա	√	√		
2	Մաթեմատիկա	√		√	
3	Կենսաբանություն	√	√	√	
4	Դեղագործական քիմիա	√			
5	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	√	√		
6	Էլեկտրոնային տեխնիկա	√			
7	Պատմություն	√	√	√	
8	Հայոց լեզու և գրականություն	√	√	√	
9	Մանկավարժություն և մեթոդիկա	√	√	√	
10	Էլեկտրաէներգետիկա		√		
11	Քիմիա		√	√	
12	Իրավագիտություն	√	√	√	
13	Տնտեսագիտություն			√	
14	Կրթությանկառավարում			√	
	Ընդամենը	**10**	**9**	**9**	

Բակալավրիատ/առկա

Առկա ուսուցման համակարգում բակալավրի կրթական ծրագրով ընդունելություն է կատարվում հետևյալ մասնագիտությունների գծով՝ <<Մաթեմատիկա>>, <<Դեղագործական

քիմիա>>, <<Կենսաբանություն>>, <<Հայոց լեզու և գրականություն>>, <<Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)>>, <<Էլեկտրոնային տեխնիկա>>, <<Էլեկտրաէներգետիկա>>, <<Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում>>, <<Իրավագիտություն>>, <<Պատմություն>>, <<Ֆիզիկա>>:

Դիմորդների թիվը վերջին երեք տարիներին ունի հետևյալ պատկերը.

Դիմորդների թիվը		
2013/14	2014/15	2015/16
147	141	135

Վերջին երեք տարիներին ընդունելության քննությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2013-2014 ուս. տարում դիմորդների քանակը եղել է 147, ընդունվել է 107 դիմորդ, 2014-2015 ուստարում դիմորդների քանակը եղել է 141, որից ընդունվել է 98 դիմորդ, իսկ 2015-2016 ուստարում դիմորդների քանակը եղել է 135, որից ընդունվել է 109 դիմորդ:

Այսինքն դիմորդների թիվը մեծ հաշվով չի փոփոխվում տատանվում է 150-ի սահմաններում:

Իսկ ըստ մասնագիտությունների՝ 2013/14, 2014/15 և 2015/16 թվականների ընդունելության արդյունքները բերված են աղյուսակում:

Մասնագիտությունը	2013/14	2014/15	2015/16
Մաթեմատիկա	9	2	11
Դեղագործական քիմիա	10	5	5
Կենսաբանություն	8	3	4
Հայոց լեզու և գրականություն	17	15	18
Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	21	25	30
Էլեկտրոնային տեխնիկա	2	12	15
Էլեկտրաէներգետիկա	5	---	---
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	18	23	17
Իրավագիտություն	4	---	---
Պատմություն	13	9	7
Ֆիզիկա		4	2
Ընդամենը	**107**	**98**	**109**

Բակալավրիատ/հեռակա

Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման բաժնում ընդունելություն է կատարվում հետևյալ մասնագիտությունների գծով՝ <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>, <<Պատմություն>>, <<Հայոց լեզու և գրականություն>>, <<Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)>>, <<Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում>>, <<Էլեկտրաէներգետիկա>>, <<Իրավագիտություն>>, <<Ֆիզիկա>>:

Հեռակա ուսուցման համակարգում ընդունելության արդյունքները այսպիսին են.

Դիմորդների թիվը		
2013/14	2014/15	2015/16
174	188	166

Աղյուսակից երևում է, որ վերջին երեք տարիներին բակալավրիատի հեռակա ուսուցման բաժնի ընդունելության ցուցանիշների աճման դինամիկան կայուն չէ:

Իսկ ըստ մասնագիտությունների՝ 2013-2014, 2014-2015 և 2015-2016 թվականների ընդունելության արդյունքները բերված են աղյուսակում:

Մասնագիտությունը	2013/14	2014/15	2015/16
Քիմիա	6	9	7
Կենսաբանություն	12	13	10
Պատմություն	17	12	7
Հայոց լեզու և գրականություն	12	17	20
Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	25	30	24
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	32	30	22
Էլեկտրաէներգետիկա	23	25	29
Իրավագիտություն	15	19	13
Ֆիզիկա		11	9
Ընդամենը	**150**	**166**	**141**

Մագիստրատուրա

ԳՊՀ-ի մագիստրատուրայում մինչև 2016-2017 ուս.տարին ուսուցումն իրականացվում էր հետևյալ մասնագիտություններով՝ <<Հայոց լեզու և գրականություն>>, <<Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)>>, <<Մաթեմատիկա>>, <<Կենսաբանություն>>, <<Քիմիա>>, <<Պատմություն>>, <<Տնտեսագիտության տեսություն>>, <<Իրավագիտություն>>: 2016/17 ուսումնական տարում <<Իրավագիտություն>> մասնագիտության ընդունելություն չի կատարվի:

Դիմորդների թիվը		
2013/14	2014/15	2015/16
147	141	135

Իսկ ըստ մասնագիտությունների՝ 2013-2014, 2014-2015 և 2015-2016 թվականների ընդունելության արդյունքները բերված են աղյուսակում:

Մասնագիտությունը	2013/14	2014/15	2015/16
Հայոց լեզու և գրականություն	9	8	11
Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	10	9	13
Պատմություն	10	14	8

Մաթեմատիկա	---	8	6
Կենսաբանություն	7	3	3
Տնտեսագիտության տեսություն	23	23	24
Քիմիա	8	3	6
Իրավագիտություն	12	11	11
Կրթության կառավարում	12	5	6
Ընդամենը	**91**	**84**	**88**

Ելնելով վերոնշյալ ցուցանիշներից՝ անհրաժեշտություն է առաջանում վերանայել մասնագիտությունների անվանացանկը, որոշ գործող մասնագիտությունների գծով ընդունելություն կատարել հեռակա ուսուցման համակարգում և շարունակել պայմանագրերի կնքումը նոր միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ՝ երկրորդ մասնագիտություն ստանալու առաջարկությամբ:

ԳՊՀ-ին արդեն տրվել են նոր լիցենզիաներ՝ մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա ուսուցում կազմակերպելու համար:

Այդ մասնագիտություններն են՝

Կենսաբանություն – 5 տեղ

Քիմիա – 5 տեղ

Մաթեմատիկա – 10 տեղ

Պատմություն – 10 տեղ

Հայոց լեզու և գրականություն – 10 տեղ

Մանկավարժություն և մեթոդիկա – 10 տեղ

Ձեռնարկությունների տնտեսագիտություն – 20 տեղ

Այժմ աշխատանքներ են տարվում ներքոնշյալ մասնագիտությունների գծով լիցենզիաներ ստանալու ուղղությամբ.

	Մասնագիտությունը	Բակալավր		Մագիստրոս	
		առկա	հեռակա	առկա	հեռակա
1	Իրավագիտություն	042 101.01.6	042 101.01.6		042 101.01.7
2	Ջրոսաշրջություն			041 301.11.7	041 301.11.7
3	Գործարար վարչարարություն (Կառավարում)			041 301.04.7	041 301.01.7
4	Կառավարում (ըստ ոլորտների)	041 301.01.6	041 301.01.6		
5	Անգլերեն լեզու և գրականություն	011 401.21.6	011 401.21.6		
6	Նախադպրոցական մանկավարժություն	011 201.01.6	011 201.01.6	011 201.01.7	011 201.01.7
7	Սոցիալական մանկավարժություն	011 301.03.6	011 301.03.6	011 301.03.7	011 301.03.7
8	Կերպարվեստ	011 401.11.6	011 401.11.6		
9	Դեղագործական քիմիա		053 101.02.6		053 101.02.7

ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2016-2017 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ

Դասիչը	Մասնագիտություններ	Ընդունելության քննություններ				Ընդ. տեղերի թիվը	Սեղմած վերջերի	Ուս. վարձը (հազ. դրամ)
		Մրցութային			Ոչ մրցութային			
011 401.01.6	Կենսաբանություն	Կ(գ)	Ք(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*	20	2	18	220
011 401.05.6	Մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*	20	2	18	220
011 401.04.6	Ֆիզիկա	Ֆ(գ)	Մ(գ)**		Հլգ(գ)*	12	2	10	220
011 401.14.6	Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Օտլ(գ)	Հլգ (գ)		27	2	25	300
011 401.19.6	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(բ)	Հլգ(գ)			27	2	25	240
011 301.01.6	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	Հլգ(գ)	Մ(գ)			32	2	30	270
031 101.01.6	Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ(գ)		30	2	28	320
053 101.02.6	Դեղագործական քիմիա	Ք(գ)	Կ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*	20	2	18	300
071 401.01.6	Էլեկտրոնիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*	22	2	20	220

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2016-2017 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ (ՆԱԽԱԳԻԾ)

	Մասնագիտություններ	Ընդունելության քննություններ				Ընդ. Տեղերի թիվը	Ուս. վարձը (հազ. դրամ)
		Մրցութային			Ոչ մրցութային		
011 401.01.6	Կենսաբանություն	Կ(գ)	Ք(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*	15	200
011 401.02.6	Քիմիա	Ք(գ)	Կ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*	10	200
011 401.14.6	Պատմություն	ՀԺՊ	ԸՊ(գ) կամ Օտլ(գ)	Հլգ(գ)		25	270
	Իրավագիտություն	ՀԺՊ(գ)	Օտլ(գ) կամ	Հլգ(գ)		30	300

			ԸՊ(գ)				
011 401.19.6	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(բ)	Հլգ(գ)		Օտլ(գ) կամ ՀԺՊ(գ)	25	200
011 301.01.6	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	Հլգ(գ)	Մ(գ)**			30	240
031 101.01.6	Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ(գ)		30	280
071 301.03.6	Էլեկտրաէներգետիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*	30	210
011 401.04.6	Ֆիզիկա	Ֆ(գ)	Մ(գ)**		Հլգ(գ)*	10	200

ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2016/17 ՈՒՍՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ (ՆԱԽԱԳԻԾ)

Դասիչը	Մասնագիտությունը, մասնագիտության կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)				Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ, առանց պարտադիր զինվորական ծառայություն ից տարկետման իրավունքի (վճարովի)	Ուսման վարձը
		Ընդամենը	Առանց տարկետման իրավունքի		Տարկետման իրավունքով		
			Ընդամենը	Այդ թվում ԲՁ			
011401.05.7	**Մասնագիտական մանկավարժություն** Մաթեմատիկա	1	1	-	-	10	220
011401.02.7	**Մասնագիտական մանկավարժություն** Քիմիա	-	-	-	-	5	220
011401.01.7	**Մասնագիտական մանկավարժություն** Կենսաբանություն	1	1	-	-	5	220
011401.18.7	**Մասնագիտական մանկավարժություն** Պատմություն	2	1	-	1	10	300
011401.19.7	**Մասնագիտական մանկավարժություն** Հայոց լեզու և գրականություն	1	1	-	-	10	240
011301.01.7	**Մասնագիտական մանկավարժություն**	1	1	-	-	10	270

	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)						
031 101.03.7	**Տնտեսագիտություն** Ձեռնարկությունների տնտեսագիտություն	1	1	-	-	**20**	**320**

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2016/17 ՈՒՍ.ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը, մասնագիտության կրթական ծրագիրը	Տեղերի քանակը	Ուսման վարձը
011401.01.7	Կենսաբանություն	5	220
011401.02.7	Քիմիա	5	220
011401.05.7	Մաթեմատիկա	10	220
011401.18.7	Պատմություն	10	300
011401.19.7	Հայոց լեզու և գրականություն	10	240
011301.01.7	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	10	270
031101.03.7	Ձեռնարկությունների տնտեսագիտություն	20	320

5. Լրացուցիչ կրթության կազմակերպում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության դպրոցներում (հատկապես գյուղական և սահմանամերձ բնակավայրերում) որոշ առարկաների գծով չի լրանում ուսուցչի՝ լրիվ դրույքով աշխատելու համապատասխան ժամաքանակը, առաջարկում ենք ՀՀ այլ բուհերի օրինակով Գորիսի պետական համալսարանում մանկավարժական մասնագիտությունների գծով 2016-2017 ուսումնական տարվանից իրականացնել լրացուցիչ մասնագիտական կրթություն (լրացուցիչ կրթություն իրականացնելու իրավունքը ամրագրված է ԳՊՀ-ի կանոնադրությամբ):

Նման խնդիր առաջացել է դեռևս 2004թ.-ից, երբ ներդրվեց մանկավարժական կրթության եռաստիճան համակարգ՝ բացառելով երկպրոֆիլ մասնագիտական կադրերի պատրաստումը: Մանկավարժների ուսումնական ծանրաբեռնվածության ապահովման հարցը հրատապ է նաև ՀՀ Սյունիքի մարզի դպրոցներում, այդ են վկայում տարբեր հանդիպումների ժամանակ դպրոցների տնօրենների և կրթության կազմակերպիչների մտահոգիչ հարցադրումները: Գորիսի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, իմ կարծիքով, ի զորու է այդ հարցադրումներին

մասնակի դրական լուծումներ առաջարկել լրացուցիչ կրթական համակարգի ներդրման միջոցով: Առաջարկում ենք առկա համակարգի բակալավրիատում հիմնական կրթության ծրագրի հենքով մանկավարժական մասնագիտությունների գծով լրացուցիչ կրթություն իրականացնել 3-րդ և 4-րդ կուրսերում՝ կամավորության սկզբունքով, վճարովի հիմունքներով, 90-120 կրեդիտներին համարժեք ժամաքանակով՝ լրացուցիչ ուսումնական պլանով:

Հարցի դրական լուծման դեպքում կմշակվի լրացուցիչ կրթության ներդրման կարգ, կձավորվի հիմնական կրթության դիպլոմին կից վկայականի ձև, կկազմվեն ուսումնական պլաններ, որոնք նոր ուսումնական տարվանից կառաջարկվեն ուսանողությանը:

Հիմնական և լրացուցիչ մասնագիտությունների օրինակներ՝

Հիմնական մասնագիտություն	Լրացուցիչ մասնագիտություն
<<Մաթեմատիկա>>	<<Ինֆորմատիկա>>
<<Ֆիզիկա>>	<<Բնագիտություն>>, <<Աստղագիտություն>>
<<Կենսաբանություն>>	<<Քիմիա>>, <<Բնապահպանություն>>

6. Գիտամեթոդական ու գիտահետազոտական գործունեության մասին

6.1. ԳՊՀ գիտական խորհրդի գործունեությունը

Գորիսի պետական համալսարանի գիտական խորհուրդը կառավարման մարմին է, որը լուծում է բուհի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման ու կառավարման հիմնահարցերը: Գիտական խորհուրդը հաստատում է իր կանոնակարգը, ռեկտորի ներկայացմամբ՝ որոշում է ստեղծել, վերակազմակերպել, լուծարել ֆակուլտետներ, ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ, հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը, ըստ մասնագիտությունների սահմանում է վճարաչափերը, քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում է գիտական հաղորդումներ բուհում կատարվող կարևորագույն գիտահետազոտական ու գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին:

Գիտական խորհրդի անդամների թիվը 28 է (2016 թվականի ապրիլի 28-ի նիստի որոշմամբ՝ փոփոխություն է կատարվել գիտական խորհրդի թվակազմում և հաստատվել նոր կազմը՝ բաղկացած 28 անդամներից, որի առնվազն 35 տոկոսն ընտրովի անդամներն են):

Գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրումն իրականացնում է համապատասխան մակարդակի ուսանողական խորհուրդը, իսկ ընտրությունն իրականացնում է ԳՊՀ ուսանողական խորհուրդը: Գիտական խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Գիտական խորհրդի 2016 թվականի ապրիլի 28-ի նիստի որոշմամբ՝ վերակազմավորվել են ԳՊՀ գիտական խորհրդին առընթեր նախկին 5 մշտական հանձնաժողովներն՝ դրանց հենքի վրա ձևավորվել են 3 նոր մշտական հանձնաժողովներ՝

1. Կանոնադրական և կառուցվածքային փոփոխությունների համակարգման,
2. Մրցութային, ուսումնամեթոդական և գիտական հարցերի,
3. Միջազգային համագործակցության, կրթական ծրագրերի և կրթության որակի:

Հանձնաժողովների խնդիրն է իրենց կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկություններ ներկայացնելը:

Գիտական խորհրդի որոշումները կիրարկվում են ռեկտորի հրամաններով, իսկ նիստերն արձանագրվում են և ստորագրվում գիտական խորհրդի նախագահի և գիտական քարտուղարի կողմից:

6.2. ԳՊՀ գիտական գործունեությունը

Գորիսի պետական համալսարանը, որպես գիտակրթական կենտրոն, մեծ ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության հարավային տարածաշրջանի համար: Համալսարանի գործունեությունը, բացի ուսումնառության կազմակերպումից, նպատակաուղղված է նաև բնագիտական, տնտեսագիտական, մանկավարժական ու ճարտարագիտական մասնագիտություններով հիմնաբար գիտական հետազոտությունների իրականացմանը:

Գիտահետազոտական աշխատանքներն իրականացվում են համալսարանի մասնագիտական ամբիոններում և լաբորատորիաներում: Կատարվող հետազոտությունների արդյունքները վավերացվում են համապատասխան հետազոտական զեկույցներում, հրապարակումներում և ամենամյա հաշվետվություններում: Հետազոտական աշխատանքների արդյունքները հրապարակվում են ինչպես Հայաստանի, այնպես էլ օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում: Գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հրապարակման համար օգտագործվում են նաև համացանցի ընձեռած հնարավորությունները:

Գորիսի պետական համալսարանում տարբեր ժամանակներում բարձր մակարդակով կազմակերպվել են բազմաթիվ միջազգային ու հանրապետական գիտաժողովներ, նստաշրջաններ, գիտական սեմինար-քննարկումներ, որոնք մեծապես նպաստել են բուհի զարգացմանն ու կայացմանը: 2010 և 2011 թվականներին կազմակերպվել են ԳՊՀ-ի միջազգային 1-ին և 2-րդ գիտաժողովները, որոնց նյութերը հրապարակվել են առանձին ժողովածուներում, 2010 թվականին Հայկական քիմիական ընկերության հետ կազմակերպվել է «Նոր նյութեր և երևույթներ» գիտաժողովը, 2014 թվականին ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի հետ համատեղ կազմակերպվել է «Դեֆորմացվող միջավայրերի փոխազդեցության դինամիկայի խնդիրները» գիտաժողովը, 2015 թվականին ՀՀ ԿԱ գնահատման և թեստավորման կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է «Կրթությունը, գիտությունը և տնտեսությունը բուհերում և դպրոցներում: Ինտեգրացում միջազգային կրթական տարածքի մեջ» խորագրով գիտաժողով:

ԳՊՀ-ում արդյունավետ հետազոտական գործունեություն են իրականացնում բնագիտական 2 լաբորատորիաները, որոնք վերջին ժամանակներս հարստացվել են կենսաբանական և քիմիական նյութերով, սարքավորումներով: Կենսաբանության լաբորատորիայի գիտահետազոտական աշխատանքներն ուղղված են բույսերից ստացված ջրային թուրմերի հակաբիոտիկ հատկությունների ուսումնասիրմանը, իսկ քիմիայի լաբորատորիայի գիտահետազոտական աշխատանքներն ուղղված են Հայաստանում և Բելոռուսում աճող բույսերից ստացված էքստրակտների և եթերայուղերի հակաօքսիդիչ հատկությունների ուսումնասիրմանը:

Համալսարանը մեծապես կարևորում է Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գործունեությունը, որի նպատակն է ուսումնասիրել և հանրությանը ներկայացնել Սյունիքի նյութական և հոգևոր ժառանգությունը:

Համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ հրատարակվում են գիտական ժողովածուներ, մենագրություններ, ուսումնական և մեթոդական ձեռնարկներ: Ընդհանուր առմամբ մեկ տարվա կտրվածքով համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից հրատարակվում են մոտ 50-60 գիտական հոդվածներ, 10-15 ուսումնամեթոդական աշխատանքներ:

Համալսարանի գիտական ներուժի համալրման հիմնական աղբյուրը հանդիսանում են մագիստրանտներն ու հայցորդները: Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից

տարեկան 4-5 հոգի ստանում են գիտական աստիճաններ և կոչումներ: Տարեցտարի նկատվում է թեկնածուական ատենախոսություն պաշտպանող դասախոսների թվի աճ: Հիմա աշխատանքներ են կատարվում Գորիսի պետական համալսարանում հետբուհական ուսուցում իրականացնելու, հայցորդներ և ասպիրանտներ ընդունելու և որոշ մասնագիտությունների գծով ատենախոսական աշխատանքների թեմաներ հաստատելու իրավունքի ձեռքբերման համար:

7. Միջազգային գործունեություն և որակի ապահովում

Որակի ապահովման գործընթացների իրականացման շրջանակներում 2010-2011թթ. ներդրվեց ԳՊՀ ՈԱ ներքին կառույցը, որի հիմնական նպատակն էր որակի ապահովման գործընթացների աջակցումն և համակարգումը: Բարեփոխումների շարունակական գործընթացում համալսարանը մշակեց որակի ապահովման հեռանկարային քաղաքականություն, որի իրականացմանն աջակցելու միտումով մշակվեց նաև որակի ապահովման ձեռնարկը (ուղեցույց): ԳՊՀ ՈԱ քաղաքականությունը և ընթացակարգերը մանրամասն ներկայացված են ԳՊՀ ՈԱ ձեռնարկում, որը նախատեսում են ՈԱ քաղաքականությունը ներդնել և իրագործել համալսարանի առաքելության և արժեքների կոնտեքստում: Այն հիմնվում է կոնկրետ սկզբունքների, իրագործելի նպատակների և դրանից բխող խնդիրների լուծման վրա:

Վերանայվում և լրամշակվում են ԳՊՀ կրթական ծրագրերին, ուսումնական պլաններին առնչվող և այլ ընթացակարգեր: Բուհի բոլոր ստորաբաժանումները ներգրավված են Ինստիտուցիոնալ հավատարմագրման համար ներկայացվելիք ինքնավերլուծության զեկույցի պատրաստման գործընթացին: Ինստիտուցիոնալ հավատարմագրման պաշտոնական մեկնարկը տրվելու է ս.թ. սեպտեմբերի 1-ից, և նախատեսվում է գործընթացն ավարտին հասցնել մինչև 2018 թվականը:

Արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներ: Վերջին տարիների ընթացքում զգալիորեն բարելավվել է համալսարանի միջազգային գործունեության ոլորտը: 2012թ.-ից համալսարանում իրականացվել են մի շարք ծրագրեր, մասնավորապես Տեմպուս-ի Cap4Com և Տեմպուս-ի ԱՐԱՐԱՏ ծրագրերը, որոնց շրջանակներում հստակեցվել են ԳՊՀ-ի համալսարան-գործատու համագործակցության զարգացման կենտրոնի դերը և գործառույթները: Տեմպուսի «MAHATMA» նախագծի շրջանակներում ԳՊՀ-ում ներդրվել է «Կրթության կառավարում» մագիստրոսական ծրագիրը: 2012թ. մեկնարկել է նաև Եվրամիության համագործակցության և շարժունության "Backis" ծրագիրը, իսկ 2013թ. "Humeria" ծրագիրը: 2016թ.-ից Erasmus+ ծրագրի շրջանակներում մեկնարկել է Գրադարանային ցանցի կատարելագործմանն ուղված ծրագիրը, ինչպես նաև Էրազմուս+ HERITAG ծրագիրը, որի նպատակն է խթանել բարձրագույն կրթության միջդիսցիպլինար ոլորտի բարեփոխումները և մշակել մագիստրոսական ու շարունակական կրթական ծրագրեր՝ GIS-ի կիրառման միջոցով զարգացնելու մշակութային ժառանգության փաստաթղթավորումը, զբոսաշրջության կառավարումն ու ձեռներեցությունը:

Արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների շրջանակներում նախատեսվում է հայաստանյան բուհերի, ինչպես նաև ԱՊՀ բուհերի միջև համագործակցության պայմանագրերի կնքում:

8. Ֆինանսական գործունեություն

Գորիսի պետական համալսարանի առկա ֆինանսական վիճակը և ֆինանսական բարելավման հետագա ուղիները:

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ
ՆԱԽԱՀԱՇԻՎ
01.01.2016թ.-01.06.2017թ. ժամանակահատվածի համար

	Հոդվածի միավորը	Հազ.դրամ
	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	
1.	Դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին	46454,5
2.	Ընթացիկ տարվա մուտքեր	338976,6
	այդ թվում՝	
2.1.	Պետական բյուջեից	65449,3
	այդ թվում՝	
2.1.1.	Կրթաթոշակ	5005,8
2.1.2.	Ուսման վարձ	47550,9
2.1.3.	Գիտ. թեմաների ֆինանսավորում	12892,6
2.2.	Արտաբյուջետային մուտքեր	273527,3
	այդ թվում	
2.2.1.	Վճարովի ուսուցում	249098,0
2.2.2.	Այլ աղբյուրներ	24429,3
3.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	385431,1
4.	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	357077,0
	Այդ թվում՝	
4.1.	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	343584,6
4.1.1.	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	292000,0
4.1.2.	Կրթաթոշակ	5405,8
4.1.3.	Գրասենյակային և տնտեսական ծախսեր	3800,0
4.1.4.	Փոփուկ գույքի և հանդերձանքի ձեռք բերման ծախսեր	0.0

4.1.6.	Գործուղման և ծառայողական շրջագայության ծախսեր	5645,3
4.1.7.	Տրանսպորտի շահագործման և պահպանման ծախսեր	3160,0
4.1.8.	Կապի ծառայության ծախսեր	1500,0
4.1.9.	Էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսեր	10300,0
4.1.10	Ջրմուղ-կոյուղու ծառայությունների գծով ծախսեր	1100,0
4.1.11	Կոմունալ ծառայությունների վճարներ	418,0
4.1.12	Ընթացիկ վերանորոգման ծախսեր	2000,0
4.1.13	Հարկեր, տուրքեր	1500,0
4.1.14	Այլ ապրանքների և այլ ծառայությունների ձեռք բերման ծախսեր	11000,0
4.1.15	Արտագերատեսչական ծախսեր	2975,5
4.1.16	Շենքերի վարձակալության գծով ծախսեր	280,0
4.1.17	Վճարումներ ՀԵՀ-ին	2500,0
4.2	ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ	13492,4
	Այդ թվում՝	
4.2.1	Սարքերի և սարքավորումների ձեռք բերման ծախսեր	11392,4
4.2.2	Այլ ակտիվների ձեռք բերման ծախսեր	2100,0
4.2.3	Կապիտալ վերանորոգման ծախսեր	0,0
5.	Մնացորդը 01,01,2017թ	28354,1

Գորիսի պետական համալսարանի կառավարման խորհրդի կողմից հաստատված 2016թ.եկամուտների և ծախսերի նախահաշվի համաձայն՝ պլանավորվել են 385431.1 հազ.դրամի *ընդամենը* եկամուտներ: Վերջինիս մեջ դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին կազմել է 46454.5 հազ.դրամ, ընթացիկ տարվա մուտքերը՝ 338976.6 հազ.դրամ: Ընթացիկ տարվա մուտքերի մեջ պետական բյուջեից ֆինանսավորման ծավալը նախատեսվել է 65449.3 հազ. դրամ կամ 19.3%, իսկ արտաբյուջետային մուտքերը՝ 80.7%, կամ 273527.3 հազ.դրամ: Պետ. բյուջետային ֆինանսավորման ծավալն ընդգրկում է՝ ուսման

վարձ՝ 47550.9 հազ.դրամ, կրթաթոշակ՝ 5005.8 հազ. դրամ և գիտական թեմաների ֆինանսավորում՝ 12892.6 հազ. դրամ: Արտաբյուջետային մուտքերը ներառում են վճարովի ուսուցումից մուտքերը, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված մուտքերը: Վերջինս կազմում է արտաբյուջետային մուտքերի 8.9%-ը: Գերակշիռ մասը՝ 91.1 %-ը, վճարովի ուսուցումից ստացվող մուտքերն են:

Տարեսկզբին հաստատված նախահաշվով պլանավորվել են 357077.0 հազ.դրամի ծախսեր: Ծախսերի ընդհանուր պատկերում առանձին ծախսային հոդվածների տոկոսաբաժինը ընդհանուր ծախսերի մեջ հետևյալն է՝

Ծախսային հոդվածի անվանումը	Առանձին ծախսային հոդվածի տոկոսաբաժինը ընդհանուր ծախսերի մեջ /%/	Գումար
Աշխատավարձ	81.8	292000.0
Կրթաթոշակ	1.5	5405.8
Հարկեր ու տուրքեր (Առանց աշխատավարձի մեջ մտնող հարկերի)	0.4	1500.0
Էլեկտրաէներգիա, ջեռուցում և այլ կոմունալ վճարումներ	4.6	16293.5
Վճարումներ ՀԷՀ-ին	0.7	2500.0
Գործուղում Այդ թվում՝ դրամաշնորհային/	1.5	5645.3
Կապիտալ ծախսեր այդ թվում -Սարքերի, սարքավորումների ձեռք բերման ծախսեր -Այլ ակտիվների ձեռք բերման ծախսեր	3.8 3.2 0.6	13492.4 11392.4 2100.0
Ընթացիկ գործունեության այլ ծախսեր	5.7	20240.0
Ընդամենը այլ ծախսեր	100	357077.0

Պարտադիր կատարման ենթակա ծախսերի տեսակարար կշիռը ընդամենը ծախսերի մեջ կազմել է 90.5 %: Եկամուտների նման պայմաններում միայն 9.5%-ն է բաժին ընկել բուհի ընթացիկ գործունեության և զարգացման ծախսերին: Հաստատված նախահաշվի համաձայն՝ ընթացիկ տարվա մուտքերը 18100.4 հազ.դրամով նվազել է ընթացիկ տարվա ծախսերից: Բուհի վերջին հնգամյակի եկամուտների դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին և ընդամենը եկամուտները տարեցտարի նվազել են:

Եկամուտների փոփոխման դինամիկան 2011-2016թթ.

N		2012	2013	2014	2015	2016
1	Դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին	83622.9	77610.2	64574.4	51187.7	46454.5
2	Ընթացիկ տարվա մուտքեր, այդ թվում	18.6%	17.7%	15.6%	13.6%	338976.6
2.1	Պետական բյուջեից, այդ թվում	366774.5		348091.2	325004.1	65449.3
2.1.1	Ուսման վարձ	65499.4	361889.7	56839.4	65451.3	47550.9
2.1.2	Կրթաթոշակ	14.5%		13.8%	17.4	5005.8
2.1.3	Գիտ. թեմաների ֆինանսավորում և միջ կոնֆերանսի գումար	45499.6	55840.1	42123.0	47564.6	12892.6
2.2	Արտաբյուջետային եկամուտներ,այդ թվում	6732.8	12.7%	3884.6	4294.8	273527.3
2.2.1	Վճարովի ուսուցում		37585.7	10831.8	12841.96	249098.0
2.2.2	Այլ աղբյուրներ	13267.0	4856.0	291251.8	259552.8	24429.3
	Ընդամենը եկամուտներ	301275.1	13398.4	70.6%	69.0	385431.1

Հաշվի առնելով բուհի ֆինանսական առկա վիճակը՝ առաջնահերթ խնդիր է դառնում.

1. Ֆինանսական աղբյուրների բազմազանեցումը. ֆինանսական ներհոսքի մեծացումը ինչպես վճարովի ուսուցման, այնպես էլ այլ աղբյուրների, պետ. բյուջեի կողմից ֆինանսավորվող թեմատիկ և բազային ծրագրերի գծով,
2. Ծախսերի կատարման օպտիմալացումը

Այս ուղղությամբ ԳՊՀ-ում առկա են ֆինանսական բարելավման որոշակի քայլեր, որոնք եթե ոչ 2016թ.-ին, ապա հետագա տարիներին կտան ֆինանսական դրական արդյունք:

1. Նախատեսվել է 2016-2017 ուս.տարում առկա ուսուցման համակարգում 1-ին կուրսեցիների ուսման վարձերի բարձրացում 20000-ական դրամով, հեռակա ուսուցման համակարգում՝ 40000-ական դրամով:
2. Գիտական խորհրդի որոշմամբ՝ հավանություն է տրվել երկու գիտական թեմաների, որոնց հաստատվելուց հետո կավելանան գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորման ծավալները: Ցանկալի կլինի, որպեսզի ծրագրերն ընդգրկեն

տարբեր ուղղություններ ու ոլորտներ, ինչը կհանգեցնի աշխատավարձի ֆոնդում աշխատավարձային տարբեր ձևերի տեսակարար կշռի մեծացմանը, առավել ևս, որ վերջին 3 տարիներին բուհում աշխատավարձի բարձրացում չի կատարվել և հիմնական աղբյուրը եղել է վճարովի ուսուցումից ստացվող մուտքերը:

3. 2016թ. մարտի 17-ի գիտական խորհրդի որոշմամբ՝ ԳՊՀ-ի <<ՈՒսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման>> կանոնակարգում կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնք հիմնականում ուղղված են եղել գեղչման համակարգի օպտիմալացմանը, սոցիալապես անապահով ուսանողների սոցիալական խնդիրների աջակցմանը:
4. 30.03.2016թ. ՀՀ ԿԳ նախարարի հրամանով ԳՊՀ-ին մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ մի շարք մասնագիտությունների գծով գործունեության թույլտվություն է տրվել մոտ 70 սահմանային տեղերի շրջանակում՝ ուսման 2.5 տարի տևողությամբ:
5. Ձգտելով հնարավորինս չխախտել բուհի բնականոն գործունեությունը՝ կատարվել են հաստիքների օպտիմալացման աշխատանքներ: Գործընթացն արդեն սկսված է, ինչն ավարտին հասցնելու դեպքում կունենանք մոտ 34 հաստիքի կրճատում՝ տարեկան 31972.6 հազար դրամի տնտեսում:
6.

Նոր հաստատված հաստիքացուցակի համաձայն նախկին հաստիքների կրճատում		
Պաշտոնը	դրույքաչափ	գումար
Ուս.կարիերայի աջակցման կենտրոնի պատասխանատու	0.5	39512
Ուս.կարիերայի աջակցման կենտրոնի ղեկավար	1	117927
ՄՀՈԱԿ-ի գործավար	1	79023
Ուս.վարչության տեսուչ	1	95764/նայած որը/
Իրավախորհրդատու	1	125669
Ընդհանուր բաժնի համակարգչային օպերատոր	1	84000/Ֆիզում/
Արխիվավար	0.5	36864
Պատճենահանող սարքի օպերատոր	0.5	39512
Հատուկ բաժնի պատասխանատու	0.5	44068
Ավարտական փաստաթղթերի ստացման, պահպանման պատասխանատու	0.5	39112
Գանձապահ	1	95845
Պլան գծով տեսուչ	1	97449
Տնտեսագետ	1	Փոխարինված է
Մատակարար	0.5	37208
Պահակ	0.5	50000
Հավաքարար	3	221181
Բակապան	0.5	36864

Բուժքույր	0.5	36864
Լվացարար	1	79023
Ֆակուլտետի գործավար	2	146000
Լաբորանտներ, կաբինետի վարիչներ	15.5	1162500
Ընդամենը	34	2664385

Բուհի ֆինանսական բարելավման հետագա ուղիներն են՝

-որոնել աշխատավարձի ֆոնդին ուղղվող լրացուցիչ աղբյուրներ,
-մեծացնել բյուջետային գիտական ֆինանսավորման ծավալները,
-օգտագործել միջազգային ֆինանսավորվող ծրագրերի հնարավորությունները,
-խրախուսել և զարգացնել սեփական միջոցների ձևավորման, բաշխման գործում համալսարանի ստորաբաժանումների նախաձեռնությունն ու ինքնուրույնությունը,
-կենտրոնացնել համալսարանի բոլոր հնարավորությունները ուսուցման բոլոր ձևերում 2006-2007 ուս.տարվա ընդունելության պլանի կատարումն ապահովելու համար,
-Զարգացնել պայմանագրային հարաբերություններ պատվիրատու կազմակերպությունների հետ՝ կադրերի պատրաստման գործում,
-իրականացնել դասախոսական կազմի ժամային ֆոնդի արդյունավետ բաշխում,
-իրականացնել ռեսուրսախնայողության ռեժիմ,
-հաստիքային քաղաքականության արդյունավետ վարումը դարձնել շարունակական աշխատանք:

9. Սոցիալական աջակցության միջոցառումներ

ԳՊՀ-ն սոցիալապես անբարենպաստ պայմաններում ապրող ուսանողների խնդիրների լուծմանը օժանդակելու նպատակով իրականացնում է ուսման վարձավճարների մասնակի գեղչման գործընթացներ՝ ըստ սովորողների սոցիալական շերտերի: Դրանք կատարվում են ինչպես բուհի ներքին ռեսուրսների հաշվին, այնպես էլ՝ արտաքին օժանդակությունների միջոցով:

ՀՀ <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> օրենքի պահանջներից ելնելով՝ ԳՊՀ-ում մշակվել է համալսարանի <<Ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ>>, որը հնարավորություն է տալիս ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, ըստ առաջադիմության ու սոցիալական դրության, ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում իրականացնել բազմաթիվ սոցիալական կարգավիճակներ ունեցող ուսանողների համար:

Օրինակ՝ 2014-2015 ուս.տարում փոխհատուցվել է 251 ուսանողների ուսման վճար՝ 12811500դրամի չափով: 2015-2016 ուսումնական տարում փոխհատուցվել է 260 ուսանողների ուսման վճար՝ 16541750 դրամի չափով:

Համալսարանի՝ բարձր առաջադիմությամբ սովորող, սոցիալապես անապահով պայմաններում ապրող ուսանողներին ուսման վարձավճարի փոխհատուցման հարցում օժանդակում են նաև մի շարք արտաքին կազմակերպություններ.

- ՀՀ կառավարությունը,
- ՀՀ երիտասարդական հիմնադրամը,
- Վիվասել ՄՏՍ-ը,
- Արևգակ ՌԷԿ-ն,
- Հայ կրթական հիմնադրամը,

- Օրանժ-Յուքոմը,
- Զանգեզուր ՊՄԿ-բարեգործական հիմնադրամը,
- Այլ կառույցներ:

Ուսանողությանը մեծ օժանդակություն են ցուցաբերում նաև բազմաթիվ ապահովագրական կազմակերպություններ: Այդ հնարավորություններից օգտվում են ինչպես աշխատող ուսանողները (ուսուցիչներ, ոստիկանության աշխատակիցներ, հայոց բանակի զինվորականներ), այնպես էլ ապահովագրական կազմակերպություններում ընդգրկված ուսանողների ծնողները:

ԳՊՀ-ին մեծ օժանդակություն են ցուցաբերում նաև մի շարք կազմակերպություններ՝ ուսումնական ծրագրերով նախատեսված պրակտիկաները իրենց կառույցներում անվճար կազմակերպելով (Գորիսում գտնվող բանկերը, հարկային տեսչությունը, Որոտան ՀԷԿ-ը, Արմենթելը-ը և այլն):

Համալսարանը որոշակի օժանդակություն է ցուցաբերում նաև աշխատակիցներին՝ իր միջոցների հաշվին կազմակերպելով տարեկան բժշկական ստուգումներ, աշխատակիցների երեխաների ուսման վարձը մինչև ութսուն տոկոս զեղչելու միջոցով: Լավագույն աշխատակիցներին համալսարանը տալիս է ֆինանսական պարգևներ, օգնություն է ցուցաբերում նաև ծայրահեղ կարիքների և այլ դեպքերում:

10. Համալսարանի կառուցվածքային և կառավարման համակարգի զարգացում և նյութատեխնիկական բազայի ընդլայնում

Գորիսի պետական համալսարանի տրամադրության տակ են գտնվում Գորիս քաղաքի Ավանգարդ 2, 4, Ս. Խանզադյան 2, Արզումանյան 37 հասցեներում տեղակայված 6 մասնաշենքները, որոնք զբաղեցնում են 2,28 հա հողատարածք: Շենքերի ընդհանուր մակերեսը կազմում է 14545 քառ.մ:

Հ/Հ	Շենքի անվանումը	Հասցե	Զբաղեցրած հողատարածքը (քառ.մ)	Ընդհանուր մակերեսը (քառ.մ)
1.	Թիվ 1 ուսումնական շենք	Ավանգարդ 2	9720,0	1859,2
2.	Թիվ 2 ուսումնական շենք	Ավանգարդ 4	6400	3762,9
3.	Գրադարանի շենք	Ավանգարդ 2	1510,0	460,2
4.	Օժանդակ շենք	Ավանգարդ 2	1280,0	362.2
5.	Հանրակացարան	Կոմերիտմիության 2	3400,0	7879,2
6.	Նախկին կաթսայատան շենք	Արզումանյան 37	480,0	191,1

Համալսարանը կրթական գործընթացը կազմակերպում է 3 մասնաշենքերում, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 6082,3 քառ.մ:

Ուսումնական մասնաշենքերում դասախոսության ու գործնական պարապմունքների համար կա 34 լսարան, 18 լաբորատորիա, որոնցից համակարգչային՝ 6, քիմիայի՝ 3, 2-ական՝ կենսաբանության, էլեկտրոնիկայի, էլեկտրատեխնիկայի, 1-ական՝ ֆիզիկայի, էներգետիկայի և նյութագիտության, ինչպես նաև առարկայական 3 կաբինետներ:

Անցած տարի ՀՀ կրթության և գիտության նախարարության ԾԻԳ-ից անհատույց ստացել ենք 49671,0 հազ. դրամի լաբորատոր սարքավորումներ, որոնցով համալրվել են ֆիզիկայի և էլեկտրաէներգետիկայի լաբորատորիաները: Տեմպուս ծրագրով ստացվել է 15 համակարգիչ: Ընդհանուր առմամբ՝ համակարգչային լաբորատորիաները հագեցած են անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով:

ԳՊՀ-ի գրադարանը 2005թ.-ից Երևանի ազգային գրադարանային ասոցիացիայի անդամ է, օգտվում է նրա հարուստ ֆոնդերից՝ ինչպես նվիրատվության, այնպես էլ միջգրադարանային աբոնենտով: Գրադարանային ֆոնդը համալրվում է ՀՀ ԳԱԱ ֆունդամենտալ գրադարանից, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի, ՀԱՊՀ-ի գրադարաններից: Գրադարանային ֆոնդը կազմում է 67654 միավոր, որից 11630-ը գեղարվեստական, 560240-ը՝ մասնագիտական գրականություն: Խիստ կարիք կա նոր հրատարակված մասնագիտական ու գեղարվեստական գրականության:

Համալսարանի ներկա ֆինանսական վիճակը բավարար չէ լուրջ ներդրում պահանջող ծրագրերի իրականացման համար:

Համալսարանի և «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի միջև երկարամյա համագործակցության համաձայնություն է ձեռք բերվել: Առաջիկայում նախատեսվում է ընկերության միջոցներով համալսարանում ստեղծել էներգետիկայի նոր լաբորատորիա:

Նպատակահարմար է փնտրել տարածաշրջանի այլ խոշոր կազմակերպությունների հետ նման արդյունավետ համագործակցության հնարավորություններ:

Համալսարանական տնտեսության մեջ կան հրատապ լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ.

- թիվ 2 ուսումնական մասնաշենքի ընդհանուր հիմնանորոգման աշխատանքներ, որոնցից առաջնայինը հին փայտյա պատուհանների փոխարինումն է մետաղապլաստե պատուհաններով,
- գրադարանի մասնաշենքի գրապահոցների նորոգում, օդափոխության համակարգի ստեղծում:

Ուսումնական մասնաշենքի թիթեղյա տանիքների մասնակի նորոգում և յուղաներկում:

Գորիսի պետական համալսարանի զարգացման ու բարեփոխման հայեցակարգի նախագիծը ներկայացվել է համալսարանի խորհրդի քննարկմանը՝ ռեկտորի թափուր պաշտոնի տեղակալման հավակնորդ, ֆիզ. մաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ռեկտորի պաշտոնակատար Ա.Ա. Ղուկասյանի կողմից: